

ԼԵՈՆԱՄԵՐԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐԻ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻ
ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒԹԵՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« 14 » հուլիսի 2015թ.

գ. Լեռնամերձ

Հարգելի Լեռնամերձ Համայնքի բնակիչներ այսօրվա համայնքի ժողովում ես ձեզ կներկայացնեմ 2015թ.-ի առաջի կիսամյակի ընթացքում կատարված աշխատանքների մասին : Կներկայացնեմ նաև բյուջեի կատարողականի մասին տեղեկություններ և կխոսեմ համայնքում առկա հիմնախնդիրների մասին : Վերջում կլինի հարց ու պատասխան : Այժմ ես հերթով կզեկուցեմ թե, որ բնագավառում ինչ է կատարվել և ինչ պետք է կատարվի:

1. Ֆինանսների բնագավառ :

Համայնքում 2015 թվականի ընթացքում հավաքագրվել է ընդհամենը 879,7 հազար դրամ գումար , որը կազմում է 2015 թվականի առաջի կիսամյակի կատարողականի 101,6% -ը որից

ա/ Գյուղնշանակության հողի հարկ հավաքագրվել է 372,2 հազար դրամ

բ/ Գույքահարկ հավաքագրվել է 179,8 հազար դրամ

գ/ վարձակալական հողի հարկ հավաքագրվել է 85,6 հազար դրամ

դ/ Պետության կողմից դոտացյա 4366,8 հազար դրամ

ե/ տեղական տուրքեր 69,9 հազար դրամ

զ/ մատուցվող ծառայությունների դիմաց 172,2 հազար դրամ

Համայնքում սեփական եկամուտների % -ը կազմում է 101,6 % որը բավարար ցուցանիշ է:

Համայնքում կատարված է համայնքի բյուջեի հաշվին հետևյալ աշխատանքները : Համայնքի բնակիչներին գյուղապետարանի աշխատանքների մասին իրազեկելու համար համայնքում տեղադրված թվով 1 ցուցատախտակների վրա փակցվել են համայնքի ղեկավարի որոշումները, կարգադրությունները և ավագանու որոշումները:

1.Հասարակական կարգի պահպանում

Ես որպես համայնքի ղեկավար շատ կարևոր եմ համարում հասարակական կարգի պահպանությունը : Համայնքի բնակիչներից շնորհակալություն եմ հայտնում հասարակական կարգը պահպանելու համար :

2. Պաշտպանության բնագավառում

Բանակը պետք է ուժեղացնենք, պաշտպանության հիմնաքարը ամուր դնենք և հետո փոխանցենք մեր սերունդներին: Այսօր համայնքում կան զորակոչճից խուսափոխ թվով 6 զինակոչիկ, որոնք գտնվում են արտ. երկրներում, մի մասը արդեն իսկ այնտեղի քաղաքացիներ են դարձել: Հարկավոր է բոլորս միասին պայքարենք և տվյալ երիտասարդներին հետ բերենք և ուղարկենք ծառայության: Մեր համայնքի համար ուղակի անոթ է զորակոչից խուսափելը:

3. Քաղաքաշինության բնագավառ

Հարգելի համայնքի բնակիչներ, քաղաքաշինության բնագավառում ես կասեի, մենք շատ թերացումներ ունենք: Խոսքս վերաբերվում է նոր բնակարաններ կառուցողներին, խնդրում եմ շինություն կառուցելու թույլտվություն ստանալ, վերջապես դա բխում է ձեր իսկ շահերից: Համայնքում կան տներ, որոնց սեսմակայունությունը ապահովված չէ, մարդը տունը կառուցում է առանց հաշվի առնելու նախագծող կազմակերպության կարծիքը: Եվ ես որպես համայնքի ղեկավար զգալով վտանգը զգուշացնում եմ բոլոր բնակչությանը շինարարությունը կատարելուց առաջ, կատարել բոլոր փաստաթղթային աշխատանքները հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգով կկասեցվի շինարարության աշխատանքները և տվյալ անձինք կենթարկվեն պատասխանատվության:

4. Հողօգտագործման բնագավառ

Համայնքում չկան հողօգտագործման խաղտումներ: Համայնքի հողերը հսկվում են մեր կողմից: Պահպանված են պատմամշակութային հողերը:

5. Տրանսպորտի բնագավառ

Կառուցապատված է համայնք մտնող գլխավոր ճանապարհը, բայց տարվում են աշխատանքներ գյուղամիջյան ճանապարհը որի երկարությունը 1 կմ. է ընդգրկել որևէ ծրագրի մեջ, որպիսի կառուցվի :

6. Առողջապահության բնագավառ

Համայնքում չկան վարակիչ հիվանդություններ:

ա/ բուժկետից օգտվել են՝ 422 բնակիչներ

բ/ տնային կանչեր 120

գ/ անվճար ուղեգրեր են տրամադրվել 17 այլ բուժ հիմնարկներում ստուգվելու համար

դ/ 2015 թվականի առաջի կիսամյակի ընթացքում ծնվել են 2 երեխաներ

Բուժ կետի աշխատանքները համարում եմ բավարար, չկան բողոքներ:

7. 2015 թվականի բյուջե

2015 թվականի բյուջեում նախատեսված է հետևյալ ծրագրերը.

1. Տեղական ինքնակառավարում /գյուղապետարան/ 5052,6 հազար դրամ
2. Աղբահանություն 180,0 հազար դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿԱԾ ՀԱՐՑԵՐԸ

1. Գյուղ տեխնիկայի ձեռքբերում
2. Համայնքի գազաֆիկացում
3. Փոստի շենքի բացակայություն
4. Գյուղապետարանի շենքի բացակայություն
5. 1 կմ համայնքային ճանապարհի կառուցում



Վ. Միրզոյան